

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ՀԱՍԱՆԸ

արարապի
Մանուկը



Ա. ԳԵԼԵՆԱ
Թարգ. Խնկո-Աղեր

ВИА ИМОТАКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОЙ АЗИИ
И ОЦЕНКИ НАУК
СССР



891.715
2-48

ՄԱՍԻՆ

1932

ՄԱՍԻՆ

ԱՐԱԲՆԵՐԸ

Փորրիկ և Հասանը: Նրա հայրն էլ,
մայրն էլ, յեղբայրն էլ, քույրն էլ իր նման
արարներ են: Նրանք ապրում են Արա-
բիայում, կիզիչ արևը բոլորովին սնացրել
և Հասանի մորթը: Հասանի աչքերը վառ-
վառ են և սև: Մազերն էլ սև են: Հասանն
իր գլուխը ծածկում է մի մեծ սպիտակ
շորի կտորով, վոր պաշտպանի արևի կիզիչ
ճառագայթներից: Նա հագնում է մի յեր-
կար սպիտակ լայն թևերով խայաթ:

Հասանի հայրը, Բեկիրը, հաղնում է
իր լայն շապիկի վրայից մի սպիտակ գո-
ւավոր վերարկու: Հասանի պես նա յեղ
գլուխը ծածկում է մի մեծ շորի կտորով
և կապում է այն բրդ' թելով:

Հասանը ճարպիկ է և շարժուն: Նա
լավ ձի յե նստում, շատ լավ վազում է,
այն էլ շատ հեռուն, առանց հոգնելու:



891.715

2-18

- 6 NOV 2011



ՀԱՍԱՆԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հեռու յե այն յերկիրը, վորտեղ ապրում է Հասանը
ընտանիքը:

Նա մի չոր անապատ է: Այնտեղ վոչ կանաչազարդ
գառտեր կան, վոչ գուլնգուլն ծաղկավետ մարգարի-
տիկներ, վոչ գետեր և վոչ լճեր: Միայն ավազը, չոր
ավազն է փոփած վտտների տակ: Քամին քշում-տանում
է վոսկու պես դեղին կամ բաց-շագանակագուլն ավազը
դեպի բլուրները: Տեղ-տեղ մանր ու խոշոր քարեր են
պատահում: Այդ անապատում յերբեմն պատահում են
և շատ մեծ ծանր քարեր, վոր բամին չի կարողանում
տեղից շարժեր: Սակայն այնտեղ շատ ուժեղ քամիներ
են փչում: Ավազը սյուլների պես բարձրացնում են գետ-
նից: Այն ժամանակ վոչ յերկիրն է յերևում, վոչ
արեգակը:



Հասանի հայրենիքում շատ քիչ անձ-
 րենքեր են գալիս: Կանաչ ու ծառ այնտեղ
 չեն կարող բուսնել: Նրանց ջուր է հարկա-
 վոր: Սակայն այդ տնապատում պատա-
 հում են այնպիսի տեղեր, փորտեղ յերևում
 են ջրի հետքեր: Ջուրը դուրս է գալիս
 գետնի յերեսը և գետակ կազմում: Այդպի-
 սի տեղերում և կանաչ է լինում, և ծառեր
 են բուսնում, և ֆինիկյան արմավենիներ: Այդ
 արմավենիները շատ համեղ պտուղներ են
 տալիս, խուրմա: Խուրման կազմում է ար-
 արանների գլխավոր ուտելիքը: Այդպիսի
 տեղերն ասվում են ոազիսներ: Ոազիսներում
 արարները կարող են հանգստանալ արմա-
 վենիների ստվերների տակ, կերակրել, ջրել
 իրենց ուղտերին, իրենց համար ուտելիք և
 խմելիք վերցնել:



ՀԱՍԱՆԻ
 ՀԱՍԱՆԻ
 ՀԱՍԱՆԻ
 ՀԱՍԱՆԻ

60541-63





ՈՒՂՏԵՐԸ

Արաքները խմում են ուղտի կաթ, նրանից պանիր են պատրաստում: Ուղտի միս էլ են ուտում: Կանայք խուզում, են ուղտի բուրդը: Գզում ենց մանում են և կտորեղեն գործում: Նրանք այդ գործվածքներով ծածկում են իրենց վր անները: Ուղտի մորթու ջրի տկեր են պատրաստում: Արաքներն առանց ուղտերի չէյին կարող ապրել:

Հարուստ արաքները պահում են քառասունից մինչև հիսուն ուղտ:

Ուղտը կարող է միքանի որ շարունակ առանց ջրի մնալ: Քաղցն էլ հեշտ է տանում, քան թե մյուս կենդանիները:

Ուղտը գնում է ավազոտ անապատով կամաց, համաշափ և հանդիստ: Նա տանում է իր մեջքին թե մարդկանց, թե բեռներ:



ՈՅՈ

Հայրն ընծայեց Հասանին մի ուղտիկ: Այդ ուղտիկը գեղեցիկ չի, բայց Հասանի աչքին այդ չի յերևում: Հասանը շատ է սիրում իր ուղտիկին և շատ յով խնամում է նրան:

— Ոյո, Ոյո — կանչում է նա նրան: Ուղտիկը մոտենում է նրան, չորում է նրա վտանների տաջ, իսկ Հասանն էլ բարձրանում և նստում է նրա բարձր մեջքին: Շոյում է իր սիրելի ուղտիկին և վզից զանազան զարդարանքներ կախում:

Ոյոյի վտանները բարձր են, վիզը յերկար-բարակ: Գլուխը փոքրիկ է: Մեջքին գնդաշափ մի կուզ կա:



ԱՆԱՊԱՏՈՒՄ

Արարները շատ անգամ տեղից տեղ են չվում: Այդ տեղափոխությունը հեշտ բան չի: Ճանապարհի համար ուտելիքի և խմելիքի պաշար ե պետք: Նրանք մինչև ուղիս հասնելը ջրի և կերակրի կողմից մեծ նեղություն են քաշում: Քամուց և ավազից նրանց աչքերը ցավում են, մորթը ճարճաբում ե: Ճանապարհ կարելի յե գնալ միայն առավոտյան և յերեկոյան: Այդ ժամանակ արևն այնպես սաստիկ չի այրում: Արարները ցերեկը հանգստանում են իրենց վրաններում: Վրանը արաբի տունն ե: Այդ վրանը շատ հեշտ ծաղկում ե յերբ հարկավոր ե առաջ գնալ: Հեշտ ել կազմվում ե, յերբ հարկավոր ե մի տեղ իջևանել: Փայտերը խըփում են գետնի մեջ: Վերի ծայրերը կապում են իրար և ծածկում վորևե շորով կամ փայտով: Ահա և պատրաստ ե տունը: Վրանների մեջ գորգեր են փռում, ներս են բերում կերակրի ամանները, ջրի տկերը: Ծաղապատիկ նստում են վրանների տակ, սեղան բաց անում, ուտում, խմում:

Իսկ յերբ ճանապարհ են ընկնում, հավաքում են իրենց վրանները, իրենց տան բոլոր իրերը, բարձում են ուղտերի վրա: Փոքրիկ յերեխաներին ել նստեցնում են ուղտերի մեջքերին: Չափահասներն ել առաջ են գնում ուղտերի յետևից:



ՀԱՍԱՆԻ ՀՈՐ ԸՆՏԱՆԻՔԸ

Հասանի հայրը շատ հոգսեր ունի: Ջրի հոգսը մի կողմից, ապրուստի հոգսը մյուս կողմից:

Բնկիրն իր մեծ վորդու հետ հոտն արածացնելու արոտատեղ է փնտռում:

Հասանի մայրն ուղտերն է խուլզում, բուրդը հավաքում, մանում, գործում: Նա իր ընտանքի համար ճաշ է պատրաստում և յերեխաներին պահում:

Հասանն ու իր քույրը միշտ ոգնում են իրենց ծնողներին: Հասանը — հորը, իսկ քույրը — մորը տան գործերում:

Հասանի փոքր յեղբայրը դեռ չի աշխատում: Այդպես է ապրում Հասանի հոր ընտանիքը հեռավոր արաբական անապատում:



ԱՐԱԲԱԿԱՆ ՔԱՂԱՔ

Անապատի ծայրին, ծովին մոտ, գտնվում է արաբական քաղաքը: Այնտեղ շատ գեղեցիկ շենքեր կան, շուր, բուսականություն:

Բոլոր այդ մեծ տներն ունեն տափակ կտուրներ, կտուրների վրա կլոր գմբեթներ: Այդ տները բանվոր—արաբներն են կառուցել հարուստների համար և ամբողջ քաղաքում փորել են բազմաթիվ ջրհորներ:

Բանվոր-արաբները շատ են աշխատել: Նրանք քաղաքի շուրջը ստղատու ծառեր են տնկել, բուստաններ և այգիներ սարքել:

Հարուստ արաբ վաճառականները շինել են տվել քաղաքում մեծ-մեծ խանութներ, զանազան տեսակ ապրանքներից լցրել են և առուտուր են անում:



Հասանն իր հոր հետ մի այն մի անգամ յեկավ այդ քաղաքը:

Նրան շատ դուր յեկան մեծ տները, խանութները և ապրանքները:

Բայց Հասանի հայրը մի խեղճ արաբ էր: Վաճառած ուղտի գնով նա իր նտանիքի համար մի այն հացահատիկ կարողացավ առնել: Հասանի մայրն այդ հացահատիկը կալա և ալյուրից հաց կթխի:

Հասանը մի այն մի անգամ յեկավ այդ քաղաքում, բայց իր տեսածը յերբեք չմոռացավ:

Նա տեսավ թե ինչպես հարուստ վաճառականներն ամբողջ որերով ծախապատիկ նրստած են իրենց խանութների առաջ գորգերի վրա և ծխացնում են իրենց տարորինա կչիբուխները:



Կաղաք բերող ճանապարհին Հասանը տեսավ, թե ինչպես արաբ գյուղացիները կուսացած աշխատում էին ամբողջ որը՝ իրենց տերերի դաշտերում, արածացնում էլին նրանց հոտերը:

Նա տեսավ և այնպիսի մարդկանց, փորոնք բոլորովին նման չեյին արաբներին: Նրանց մորթի սև չեք, և արաբների պես ել հագնված չեյին նրանք:

Հայրն ասաց Հասանին, փորդանք անգլիացիներ են, յերկրի

գլխավոր տերերը: Նրանք յեկել են այստեղ շատ վորքով: Անգլիացիները բռնտարկել են Հասանի հորեղբորը՝ Չահել բանվոր Ռաշիդին, այն պատճառով, փոր նա հավաքել է ուրիշ, իր նման բանվորներին և ասել է թե ինչպես հարուստները ճնշում, շահագործում են չքավորներին:

« Ազգային գրադարան

 NL0390524

3941

